

## ИСТОРИЯ

### «ՎԱՆ-ՏՈՍՊ» պարբերականը

Մարգարյան Ս.Թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ /Հայաստան, Երևան/  
sargsyansuren@yandex.ru

**Վճռորոշ բառեր՝** Հայաստանի Առաջին Հանրապետություն, մամուլ, Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցություն, «Վան-Տոսպ» պաշտոնաթերթ

#### Периодическое издание “Ван-Тосп”

Саргсян С.Т.

Институт истории НАН РА (Армения, Ереван)  
sargsyansuren@yandex.ru

**Резюме:** “Ван-Тосп” начал издаваться с 1911 гшода в Ване под редакцией Ованеса Авагяна. В 1912 г. издание стало официальным органом Васпураканского отделения Армянской Конституционной партии Рамкавар. С этого момента начинается новый этап в истории издания.

В период обсуждения Армянского вопроса, в качестве официального органа Рамкаваров “Ван-Тосп” выступал с позиций умеренных требований. С ноября 1915 года издание “Ван-Тоспа” перешло в Тифлис, где главным редактором стал Тигран Назарян, а ответственным секретарем Артак Дарбинян. В сложившихся условиях газета каждодневным упорным трудом пыталась “зарубцовывать” раны и последствия Геноцида во всех слоях армянского общества.

После провозглашения независимости Армении, в 1919 г. газета начала издаваться в Ереване, а 24 сентября 1919 года она переименовалась в “Айреники дзайн” (Голос Отечества). Главным редактором стал Артак Дарбинян, под руководством которого газета посвятила себя делу установления демократических устоев в стране.

**Ключевые слова:** Первая Армянская республика, пресса, Армянская Конституционная Партия рамкавар, официальный орган газета “Ван-Тосп”

#### Periodical “Van-Tosp”

Sargsyan S.T.

Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan)  
sargsyansuren@yandex.ru

**Abstract:** “Van Tosp” began publishing in 1911 in Van edited by Hovhannes Avagyan. In 1912, the edition became the official body of the Vaspurakan branch of the Armenian Constitutional Ramkavar Party. From this moment a new stage in the history of the publication begins.

During the discussion of the Armenian question, as an official body of the Ramkavar, “Van-Tosp” spoke from the standpoint of moderate demands. From November 1915, the “Van-Tospa” edition was transferred to Tiflis, where Tigran Nazaryan became the chief editor, and Artak Darbinyan, executive secretary. Under current conditions, the newspaper tried to heal the wounds and consequences of the Genocide in all sectors of Armenian society with everyday hard work.

After the independence of Armenia was declared, in 1919 the newspaper began to be published in Yerevan, and on September 24, 1919 it was renamed “Ayreniki Dzine” (Voice of the Fatherland). The chief editor was Artak Darbinyan, under whose leadership the newspaper dedicated itself to the establishment of democratic principles in the country.

**Keywords:** The first Armenian Republic, the press, the Armenian Constitutional Party of Ramkavar, the official organ the newspaper “Van-Tosp”

Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության ընթացքում մայր հայրենիքում լույս տեսած ռամկավար մամուլի օրգաններ (մեծ հաշվով Հայ Ժողովրդական և Սահմանադրական Ռամկավար կուսակցությունները ռամկավարների արևելահայ և արևմտահայ հատ-

վածներն են) «Ժողովուրդ» և «Ժողովրդի ձայն» թերթերին զուգահեռ կարևոր դերակատարություն ուներ նաև Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության պաշտոնաթերթ «Վան-Տոսպ»:

Նշենք, որ «Վան-Տոսպը» որպես գրական, գիտական, հասարակական-քաղաքական, կրոնական թերթ (հետագայում՝ կիսամյա, շաբաթական, եռօրյա և այլն) սկսել է լույս տեսնել 1911 թ. Վանում՝ Հովհաննես Ավագյանի խմբագրապետությամբ: Տարբեր տարիներին թերթի խմբագիրներ են եղել՝ Հ. Ավագյանը, Կ. Սիտալը (Շահինյան), Մ. Պալոյանը, Պ. Հովնանյանը, Ս. Ժամկոչյանը, Ա. Դարբինյանը, Վ. Պապիկյանը, Ա. Ավետիսյանը: Սկզբում պատասխանատու տնօրենն էր Սիմոն Ժամկոչյանը, իսկ արտոնատերը՝ Ղազար Հարությունյանը: Քաղաքական իրադարձությունների և խմբագիրների փոփոխման պատճառով փոխվել է նաև «Վան-Տոսպ»-ի բովանդակությունը:

Թերթն **Առաջին շրջանում** (Վան) ուներ ընդգծված գրական-բանասիրական, պատմագրագրական բնույթը: Թերթում տպագրվում էին պատմագիտական հետազոտություններ, որոնցում լուսաբանվում էին Վան-Վասպուրականի հերասական անցյալը, Ուրարտու պետության պատմությունը, ներկայացվում օտար ճանապարհորդների թողած խիստ արժեքավոր հուշերը դրանց մասին:

Այդ մասին թեև որևէ հայտարարություն չեղավ, սակայն 1912 թ. վերջերին թերթում տպագրված նյութերի բովանդակությունից ակնհայտ երևում է, որ թերթը դարձել է Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության (այսուհետև՝ ՀՍՌԿ)<sup>1</sup> Վասպուրականի շրջանակի պաշտոնաթերթը՝ արևմտահայ մտավորական Նշան Հակոբյանի խմբագրապետությամբ: Այս թվականից էլ սկսվում է պարբերականի պատմության **նոր շրջանը**:

Աստիճանաբար թերթում սկսեցին լույս տեսնել քաղաքական բնույթի նյութեր: Դրանցում հատկապես շատ էին ՀՍՌԿ-ին ընդդիմադիր կուսակցությունների և դրանց ենթակա այլ կառույցների հասցեին տարբեր առիթներով քննադատություն պարունակող հրապարակումները:

**Նոր շրջանում** առանձնանում է հատկապես 1913 թ, հունիսի 8-ին լույս տեսած թերթի 16 էջանոց 20-րդ համարը, որն ամբողջովին նվիրված էր «96ի ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ տասնե-

եթոնամեակին»<sup>2</sup>: «Դեպի զարթոնք», «Նահատակներին», «Ոսկե խոտը», «Թռուցիկ հիշողություններ», «1896-ի դասը», «Հուշեր 1896էն» և այլ հրապարակումներում հեղինակները կակիծով են հիշում 1896 թ. կատարված արյունալի դեպքերը, սակայն ոչ միայն չեն հուսահատվում կատարվածից, այլև աննկուն կորովով սեղմելով ատամները փորձում են հուշել, որ հուսահատվել պետք չի, այլ հարկավոր է դասեր քաղել կատարվածից, որպեսզի դրանք ապագայում չկրկնվեն:

1912 թ. Հայկական հարցի վերաբացման շրջանում «Վան-Տոսպը» թերևս արևմտահայ իրականության մեջ ամենաակտիվ գավառական պարբերականն էր, որը պարբերաբար անդրադառնում էր այդ հիմնախնդրին: Ընդհանուր առմամբ, ռամկավարները դեմ էին հեղափոխական կամ ապստամբական ելույթներին<sup>3</sup> և պաշտպանում էին օսմանյան ժողովուրդների հետ հայ բնակչության խաղաղ և անարյուն զարգացման գաղափարը: Բնականաբար թերթն էլ էր հանդես գալիս չափավոր պահանջներով: «Վան-Տոսպը» կողմնակից էր հասարակության աստիճանական զարգացմանը, «դեմ գնալով ամեն տեսակ ծայրահեղություններու, որոնք աջէն կուզան, թե ձախէն միևնոյնն է»<sup>4</sup>: Թերթի հեղինակները քննադատում էին բոլոր նրանց, ովքեր Արևմտյան Հայաստանում սոցիալիզմ էին քարոզում և գտնում էին, որ այնտեղ առայժմ այդ գաղափարները ժամանակավրեպ էին և վնասից բացի որևէ օգուտ չէին կարող բերել: Հատկապես տնտեսության մեջ մերժելով սոցիալիստական տեսությունը՝ նրանք գտնում էին, որ արևմտահայ իրականության մեջ քննություն կարող են բռնել կապիտալիստական կարգերը:

1913 և հատկապես 1914 թվականների համարներն ուսումնասիրելիս պարզ երևում է, որ «Վան-տոսպն» ամբողջովին զգում էր արևմտահայության զարկերակը: Թերթը նյութեր էր տպագրում հայության գլխին օր օրի խտացող վտանգավոր զարգացումների մասին: Զգոնության և սին ու պատիք խոստումներին տուրք չտալու կոչերն ու հորդորները շարունակվում էին համարից համար: Պար-

<sup>1</sup> Կուսակցության ամբողջական պատմությունը տե՛ս Մարգարյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն. 1908-1921 թթ., Ե., 2009:

<sup>2</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 8 հունիսի 1913, թիվ 20:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 7, գ. 11, թ. 1-2, նաև «Մշակ», 13. IV.1917:

<sup>4</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 15 հունիսի 1913:

բերականին այս շրջանում հատուկ էին իրականության ռեալ զգացողությունը, երիտթուրքերի կեղծ խոստումներին չհավատալը և, ամենակարևորը, հայության գոյությանն սպառնացող վտանգին դիմագրավելու համար ինքնապաշտպանության գործին պատրաստ լինելու զգացողությունը: Թերթն այդ շրջանում իր էջերում մեծ տեղ էր հատկացնում երիտթուրքերի հայահալած գործելակերպի, գոյատևման համար արևմտահայության մղած պայքարի և ազատության ուղիների որոնումների լուսաբանմանը:

Ի դեպ, իրականությանը չի համապատասխանում այն պնդումը, որ «1914 թ. բռնկված առաջին համաշխարհային պատերազմի ու հայության մեծագույն դժբախտության՝ Մեծ եղեռնի հետևանքով «Վան-Տոսպն» առժամանակ դադարեց լույս տեսնելուց»<sup>6</sup>: Իրականում 1914 թ. լույս է տեսել թերթի ինն համար, իսկ 1915 թ.՝ Վանում՝ որպես եռօրյա թերթ՝ երկու և Թիֆլիսում արդեն՝ հինգ համար (համենայն դեպս մեզ հաջողվեց գնտել այդքանը, իսկ թե էլի համարներ լույս տեսել են այդ շրջանում, մենք չգիտենք, սակայն եղած փաստերը խոսում են այն մասին, որ ամենայն հավանականությամբ այդքանն է լույս տեսել): Ընդ որում, բավական հարուստ բովանդակություն ունի հատկապես 1915 թվականի հունիսի 30-ին լույս տեսած թիվ 13(105) համարը: «Օրվան պահանջները», «Ապրուստի սղությունը Վանի մեջ», «Վասպուրականը մեծ աղետից հետո» «Կարմիր ամիսը» վերնագրերով ծավալուն հրապարակումների հեղինակներ Ե. Ռշտունին, Ե. Վարդանյանը, Սուրենը և մյուսները ատամները ցավից սեղմելով, սակայն իրականության զգացողությունը չկորցնելով, փորձում են ժողովրդին հույս ներարկել ապագայի նկատմամբ, ապրելու ու արարելու կորովը չկորցնել նույնիսկ այդ դժվարագույն պայմաններում: Առօրյա դժվարությունները ներկայացնելով՝ մատնանշել դրանք հաղթահարելու ուղիները:

\*\*\*

1915 թ. աշնանը ռամկավարները, Թիֆլիսում ձեռնամուխ են լինում իրենց «Վան-Տոսպ» պաշտոնաթերթի հրատարակմանը, սակայն նյութական սուղ վիճակը թույլ չի

տալիս անմիջապես կազմակերպել հրատարակությունը: Դիմում են կուսակցության Ամերիկայի շրջանակին, որտեղից պատասխան են ստանում միայն երկու ամիս անց: Մինչ Ամերիկայից ուղարկված դրամը տեղ կհասներ, Ռոստովից նյութապես օգնում են ռամկավար Տիգրան Թյությունճյանը և տեղի ռամկավարները: **1915 թ. նոյեմբերին** ՀՍՌ կուսակցության պաշտոնաթերթ «Վան-Տոսպը», որ պատերազմի պատճառով առժամանակ դադարել էր լույս տեսնելուց, իբրև հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթ, «իբրև իր փախստական եղբայրակիցներու օրգան» **սկսեց վերահրատարակվել** Թիֆլիսում<sup>6</sup>: Թերթը տպագրվում էր «Էպոխա» տպագրատանը: Այս պահից սկսած մեր կարծիքով սկսվում է թերթի **Նոր շրջանի երկրորդ փուլը**:

Թերթի գլխավոր **խմբագիրն էր Տիգրան Նազարյանը**, իսկ պատասխանատուն՝ **Արտակ Դարբինյանը**: Այս շրջանում աչք է շոյում թերթի գեղեցիկ ձևավորումը: Մասնավորապես՝ ամենասկզբից «Բովանդակություն» վերտառությամբ ողջ համարի նյութերի վերնագրերի ներկայացումը: Պարբերականն ուներ «Խմբագրական», «Գրական երկեր», «Մամուլ», «Ներքին տեսություն», «Արտաքին տեսություն», «Շաբաթական լուրեր», «Հայտարարություններ», «Այլ և Այլ» կայուն խորագրերը:

«Վան-Տոսպի» առաջին համարի առաջնորդողում ներկայացվում էին պարբերականի նպատակները: Դրանք էին՝ ա) «Հրդեհվող» հայրենիքի մոխիրների տակից լսվող տառապանքի ձիչն ու բողոքը հասցնել աշխարհի հայությանը և նրա բոլոր բարեկամների ու թշնամիների «մտքին ու սրտին»: «Վան-Տոսպը» պիտի լինի թուրքահայութեան տառապանքների հայելին, նրա տանջանքների արձագանքը, իսկ նրա մտասնեռման կենտրոնը, նպատակադրում էին թերթի հրատարակիչները, ընդհանրապես մեր ազգային կյանքը և «մասնավորապես տաճկահայ հարցը պիտի լինի»<sup>7</sup>: բ) «Կովկասահայութեան առջև պարզել տաճկահայերի ազատագրութեան գործում ռուսահայ բոլոր կուսակցություններու և խավերու ունեցած բացասական դերը (հնչակեաններ, դաշնակցականներ,

<sup>5</sup> Տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922, հ. 2, էջ 648:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 43, էջ 1, տե՛ս նաև Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 146: Թերթի խմբագրության հասցեն էր՝ Գոլովինսկայա պող. 41, իսկ հեռախոսի համարը՝ 16-90  
<sup>7</sup> Տե՛ս Դարբինեան Ա., նշվ.աշխ. էջ 336:

մշակականներ...»<sup>8</sup>: Դարբինյանն ընդգծում է, որ պատասխանատվությունից զերծ էին մնալու «փոքրաթիվ ընկերվարականները (սոցիալ-դեմոկրատները և սոցիալ-հեղափոխականները), որոնք սկզբից դեմ էին ռուսահայերու միջամտութեանը թրքահայ շարժման մեջ»<sup>9</sup>: Մա, ինչպես իրավամբ նշել է հայ մամուլի գիտակ Խ. Բարսեղյանը<sup>10</sup>, հետևանք էր այն բանի, որ դառնացած ու հուսահատված, որոշ արևմտահայ ռամկավար գործիչներ, սովյալ պահին դեպքերի թարմ տպավորությունների ազդեցության ներքո երբեմն հիմնավոր, երբեմն էլ անապացույց մեղադրանքներ էին նրկայացնում քաղաքական մյուս ուժերի և կուսակցությունների հասցեին: Գ) Մասնավորապես պարզել ՀՅԴ պատասխանատվությունը «Կամաւորական շարժման՝ թուրքահայութեան գլխուն պայթած աննախընթաց աղէտին մէջ»<sup>11</sup>: Նրանք կարծես աչքաթող էին անում այն կարևոր հանգամանքը, որ կամավորական շարժմանը մասնակցել էին նաև այլ քաղաքական ուժեր, այդ թվում նաև իրենք՝ ռամկավարները և հետո այն ունեցավ նաև դրական նշանակություն. Վասպուրականի հայությանը փրկեց բնաջնջումից և շատ անգամներ պաշտպանեց արևմտահայ գաղթական զանգվածներին քրդական հարձակումներից: Դ) «Կովկասում ապաստանած մոտ 250 հազար թիրքահայ գաղթականների ցավերուն արձագանգ դառնալ և դարման փնտրել»<sup>12</sup>: Այսինքն՝ ռամկավարները նպատակ ունեին մամուլի միջոցով կովկասահայության լայն զանգվածներին ներգրավել գաղթականության օգնության գործում:

«Վան-Տոսպի» առաջին համարի առաջնորդողում նշվում էր նաև, որ «տաճկահայության ողջակիզման ողջ պատասխանատվությունն ընկնում է երիտթուրքերի վրա»<sup>13</sup>: Որ «Վան-Տոսպ»-ն իբրև ծնունդ թիրքահայ իրականութեան և հաւատարիմ աւանդապահ Վանում հրատարակուող «Վան-Տոսպ»-ին՝ թիրքահայութեան ձայնը, նրա տառապանքների հա-

յելին, նրա մտասնեռման կենտրոնը ընդհանրապես տաճկահայ հարցը կլինի»<sup>14</sup>:

Շարունակելով նույն ոգով «Օրուան ստիպողական պահանջները» հոդվածի հեղինակ Մ. Մինասյանը նշում է, որ այն ճգնաժամը, որի միջով անցնում են հայերը, ահավոր է և բախտորոշ: Միաժամանակ դրանք «փորձանշաններ են անհատական կամ ազգային կեանքերու մեջ»<sup>15</sup>: Հեղինակն օրվա գլխավոր պահանջ է համարում գթասրտությունն ու բարությունը, որպեսզի հնարավոր լինի պահպանել ցեղասպանությունից հրաշքով փրկված հայության բեկորներին:

Արևմտահայ նշանավոր մտավորական Վ. Պապիկյանն էլ «Դուրս եկեք կախարդական շրջագծից» ծավալուն հոդվածում ցավով արձանագրելով, որ «ծանր ճգնաժամ է հայ ազգի համար» կոչ էր անում բոլորին չկորցնել հոգու կորովը, դադարել հավատալ կեղծ բարեկանների սին խոստումներին և եզրակացնում. «Ժամանակն է դուրս գալ անվերջ խօսքերի կախարդական շրջագծից և ուժին ուժ հակադրել»<sup>16</sup>:

Երկրորդ փուլում (Թիֆլիս) «Վան-Տոսպը» ներկայացրել է նաև առաջին աշխարհամարտի ընթացքը, Արևմտյան Հայաստանի ազատագրված շրջանների կյանքը, փրկված արևմտահայության տեղավորմանն ու որբերի պատսպարմանն ուղղված հայկական և օտար ընկերությունների գործունեությունը: Այս շրջանում պարբերականը կարևորել է հայ ժողովրդի երկու հատվածների փոխադարձ ճանաչումն ու մերձեցումը, ակտիվ պայքար մղել դրանք խաթարող քաղաքական ուժերի դեմ:

Մինչ այդ կամավորական շարժումը քննադատող ռամկավարները (արդեն տևական ժամանակ նրանք հրաժարվել էին Մահմանադրական ինքնանվանումից) հայկական կոտորածներն սկսվելուն զուգընթաց կտրուկ փոխեցին իրենց վերաբերմունքը և որոշեցին սատարել կամավորական շարժմանն ու ձեռնարկեցին գործնական քայլեր: 1915թ. հունիսին ՀՍՌԿ Ամերիկայի նահանգային վարչությունը կովկասահայության կամավորական շարժմանն աջակցելու նպատակով նամակ-շրջաբերականով դիմում է իր ակումբներին: Այս-

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>10</sup> Տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922, հ. 2, էջ 650:

<sup>11</sup> Տե՛ս Դարբինեան Ա., նշվ.աշխ. էջ 337:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>13</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 29 նոյեմբերի 1915թ.:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>16</sup> Տե՛ս «Վան-Տոսպ» 29 նոյեմբերի 1915թ.:

տեղ կոչ էր արվում դրամական և այլ հնարավոր միջոցներ հանգանակել, ինչպես նաև մարտական խմբեր հավաքագրել և ուղարկել Երկիր<sup>17</sup>:

Ռամկավարների շրջանում նոր հույսեր է արթնացնում Վանի վերագրավումը: Նրանց և մշակականների նախաձեռնությամբ 1915 թ. սեպտեմբերի վերջին Թիֆլիսում տեղի է ունենում խորհրդակցություն, որին մասնակցում են «Մշակի» կողմից Հ. Առաքելյանը, պրոֆեսորներ Ստ. Մալխասյանը, Եզիկյանը, Պետական դումայի անդամ Մ. Պապաջանյանը, ռամկավարներից՝ Ա. Եկարյանը, Հ. Գույումջյանը, պրոֆեսոր Մինասյանը, Հ. Կաքավյանը, Ռ. Հովհաննյանը և ուրիշներ: Այստեղ որոշվում է կազմել վերագրավված Վանի վարչական և պաշտոնական հատուկ մարմին, որի հսկողությանը պիտի ենթարկվեն նաև արևմտահայ մյուս գրավված տարածքները: Այն ստանում է «Հայաստանի Վերաշինաց յանձնաժողով» անունը (այսուհետև՝ ՀՎՀ)<sup>18</sup>: Տեղեկացնելով այդ մասին «Վան-Տոսպը» գրում էր, որ ստեղծված հանձնաժողովի նպատակն է «աջակցել թիրաքահայ մտավորականներին՝ հայրենիքի վերաշինութեան սուրբ գործին»<sup>19</sup>:

ՀՄՌԿ ղեկավարներն այդ օրերին ակտիվ շփումների մեջ էին մտել կովկասահայության տարբեր շրջանակների և գործիչների հետ, որի գլխավոր նպատակն էր «թրքահայ փախստականութեան համար օգնութեան միջոցներ փնտրելը»<sup>20</sup>: «Մեր անելիքը և ապագան» վերլուծական առաջնորդում «Վան-Տոսպը» գրում էր, որ ստեղծված պայմաններում հայության բոլոր խավերը պետք է անդուլ աշխատանքով սպիացնեն վերքերը: «Աշխատանք» ասելով, հողավաճառքը պատկերացնում էր այնպիսի գործողություններ, ինչպիսիք էին օրինակ՝ օժանդակել գյուղացիությանը տնտեսության վերականգնման գործում, բացել դպրոցներ և մատաղ սերնդին դաստիարակել հայրենասիրության ոգով, զարգացնել մամուլն ու գրականությունը, արծարծել հոգևոր հայրենիքի, այսինքն՝ հայ ժողովրդականու-

թյան գաղափարը, - ահա մեր անելիքն ու ապագան,-եզրափակում է հեղինակը<sup>21</sup>:

Թերթը մշտապես իր էջերում բարձրացնում էր նաև գաղթականների վիճակի հարցը Արևելյան Հայաստանում, Ռուսաստանի տարբեր վայրերում և ցույց տալիս, որ կատարվում են որոշակի քայլեր. բացվում են դպրոցներ, որբանոցներ, շեշտվում է ամերիկահայության ֆինանսական մեծաքանակ օգնությունը և, ընդհանրապես, բոլոր նպաստամատույց մարմինների գործունեությունը: Բավական մանրակրկիտ լուսաբանվում էր Վանի և շրջակա գյուղերի կյանքը, վերադարձած հայության դրությունը, նրանց կարիքները և այլ հարցեր:

«Վան-Տոսպը» հաճախ էր անդրադառնում ամերիկյան միսիոներներին և շնորհակալությամբ մատնանշում էր նրանց կատարած հիրավի մարդափրկիչ աշխատանքը՝ հատկապես որբախնամ գործում: Ընդգծվում էր մասնավորապես ամերիկյան նշանավոր դոկտորներ Ռեյնոլդսի, Ուիլսոնի և Մեքքալի գործունեությունը, նրանց խանդավառությունը հայերի յուրաքանչյուր հաջողության դեպքում, իսկ ժողովրդի օրհասական բույներին նրանց սիրալիր, հոգատար վերաբերմունքը: «Երբ տաճկահայ գաղթականութիւնը Կովկաս թափուեցաւ, Ամերիկայի մարդասերները չմոռացան զայն իր թշվառութեան մեջ, - գրում է «Վան-Տոսպը», - իսկոյն հանգանակեցին խոշոր գումարներ և հատուկ պատվիրակութեան մը յանձնելով Կովկաս խրկեցին»<sup>22</sup>: Իսկ երբ սկսվեց գաղթականների վերադարձը հայրենիք, վերահիշյալ միսիոներները անմիջապես «Պարսկաստանէն եզներ գնելով երկիրը մտցուցին և սկսան բաժնել գյուղացիութեան, կապելու համար հայ ազգի արմատը իր կենսատու հողի հետ»<sup>23</sup>: Ի դեպ նկատենք, որ միսիոներների գերիսնդիրը բոլորովին այլ էր և այն դուրս է մեր հետաքրքրության շրջանակներից: Բայց որ նրանք հայանպաստ զգալի քայլեր արեցին, անվիճելի է և միանգամայն արժանի դրվատանքի:

1915 թ. սեպտեմբերին Թիֆլիսում գումարվում է միջկուսակցական խորհրդաժողով (մինչ այդ այդպիսի միջկուսակցական ժողով

<sup>17</sup> Տե՛ս «Պայքար», Բոստոն, 23 դեկտեմբերի, 1958:

<sup>18</sup> Տե՛ս «Պայքար», Բոստոն, 23 դեկտեմբերի, 1958թ., նաև Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 340:

<sup>19</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 29 նոյեմբերի, 1915թ.:

<sup>20</sup> Տե՛ս Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 340:

<sup>21</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 6 դեկտեմբերի, 1915 թ.:

<sup>22</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 12 հունիսի, 1916թ.:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում:

գումարվել էր 1915 թ. մայիսի 20-ին Ալեքսանդրիայում), որտեղ մասնավորապես հրնչակյանների հետ չի հաջողվում գաղթականության հարցում համաձայնության գալ: Մակայն ռամկավարները երբեք համագործակցության հույսը չէին կորցնում: Ավելին, անդրադառնալով հիմնախնդրին, «Վան-Տոսպը» գրում էր, որ թուրքահայ գաղթականներն իրավունք ունեն հովկասահայ պատգամավորներից ակնկալել, որ վերջիններս իրենց հարցը պատշաճ կերպով կբարձրացնեն Ռուսաստանի Պետական դումայում: Դա մասնավորապես վերաբերում էր Մ. Պապաջանյանին, որի հետ ռամկավար գործիչների մեծ մասը մոտ հարաբերությունների մեջ էին<sup>24</sup>:

«Վան-Տոսպը» երբ սկսեց հրատարակվել Թիֆլիսում, այլ հիմնախնդիրների շարքում կարևոր համարեց բողոքել այնպիսի խնամակալության դեմ, որ ռուսահայ մտավորականության մեծ մասը դարից ի վեր տարածել էր արևմտահայերի վրա, պահելով իր ձեռքում նրանց ազատագրական շարժման ղեկավարության մենատիրությունը<sup>25</sup>: Պարբերականը գրում է, որ երբեմն արևմտահայերի ճակատագիրը տնօրինել են կովկասահայ այնպիսի գործիչներ, որոնք չեն իմացել հայոց պատմությունը, նույնիսկ հայերեն խոսել, գրել ու կարդալ: Եվ բնական է, որ այդպիսիները չպիտի կարողանային հասկանալ օրվա պահանջները և ըմբռնել պատմական հանգամանքները:

Հատկապես պատերազմի դժվար տարիներին, ինչպես մյուս կուսակցությունների, այնպես էլ ռամկավարների և մյուսների միջև միջկուսակցական անհանդուրժողականությունը ուժեղանում էր: Կուսակցական պաշտոնաթերթերում միմյանց հասցեին անհարգալից պիտակների պակաս չէր զգացվում: «Վան-Տոսպի» քննադատությունը հիմնականում ուղղված էր ՀՅ Դաշնակցության դեմ: Ընդգրծենք այն հանգամանքը, որ ռամկավարները քննադատության թիրախ էին դարձրել ոչ թե Դաշնակցությանն ընդհանրապես, այլ նրա գործելակերպի մի շարք դրսևորումներ: Մասնավորապես, քննադատվում էին այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք էին ցուցամուլությունը, փառասիրությունը, ամեն

ինչ իրենց վերագրելու մոլուցքը, եկեղեցունկատամբ անհարգալից վերաբերմունքը, անհանդուրժողականությունը մյուս կուսակցությունների նկատմամբ և այլն:

«Դուրս եկեք կախարդական շրջանից» հոդվածում Վարդան Պապիկյանը հայության կրած անդուլ տառապանքների համար մեղքի բաժին էր հատկացնում նաև հայ կուսակցություններին ու նրանց գործունեությանը: Հեղինակը գտնում էր, որ հարկավոր է «օգտվել անցեալի փորձառութիւններից և ձեռք քաշել հին սխալներից՝ ցուցադրական ելույթներ և անհանդուրժողականութիւն, բայց ոչ գործունեության միջոցից»<sup>26</sup>: Այսինքն՝ հեղինակը կողմնակից էր ակտիվ պայքարի կուսակցական մարտավարությանը և դեմ էր ցուցամուլությանը: Գտնելով, որ հայ ժողովրդի ճակատագիրը պիտի վարեն կազմակերպված մարմինները, հեղինակը ցույց էր տալիս, որ նման կազմակերպությունը պիտի լինի դեմոկրատական, ազատական բնույթի, որի նպատակը չպիտի լինի հասարակության արդի կառուցվածքի փոփոխությունը, ինչպես այդ արել էին հայոց մեջ գործող մի քանի կուսակցություններ, որոնք հավակնություն ունեին հայ ժողովրդի ազգային իրավունքները «ձեռք ձգելուց զատ հեղաշրջել նրա սոցիալական կարգերը»<sup>27</sup>: Հեղինակի կարծիքով հայ ժողովրդի անելանելի վիճակում հարկավոր էր օգտագործել բոլոր խավերի հնարավորությունները՝ նախ ազգի գոյությունն ապահովելու համար, որ սոցիալական վերափոխությունների կոչերը (որոնցով հանդես էին գալիս ՄԴՀ և ՀՅԴ կուսակցությունները) ժամանակավրեպ էին և ապագայի խնդիր: Հոդվածագիրը դատապարտում էր նաև նրանց, ովքեր ազգային խնդիրներում որդեգրում էին չեզոք դիրքորոշում: Այդպիսիները «արժանի են խորին արհամարհանքի», քանի որ փակում են իրենց աչքերը չարիքի դեմ կռվելու փոխարեն և «բաւականանում են միայն քննադատելով»:

ՀՍԹ կուսակցությունն շարունակում էր ատաջ մղել համերաշխության և համագործակցության խնդիրը: «Վան-Տոսպը» հրապարակում է Ա. Չոպանյանի հայտնի նամակը, որով նա կոչ էր անում բոլոր կուսակցություններին «առժամանակ մոռանալ վեճ ու կռիվ և

<sup>24</sup> Տե՛ս Ավագյան Գ., Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2009, էջ 27:

<sup>25</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 4 սեպտեմբերի, 1916:

<sup>26</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 29 նոյեմբերի, 1915:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում:

համերաշխուել դարմանելու վերքերը»<sup>28</sup>: Ռամկավարները գտնում էին նաև, որ բացի կուսակցություններից, իրենց ուժերը պետք է միավորեն նաև բարեգործական մարմինները: Այս առումով «Վան-Տոսպը» գրում էր. «Ունինք բազմաթիվ գաղթական մարմիններ: Եղբայրական օգնությունը, Բաքուի կոմիտեները և Կանանց, Օրիորդաց և այլ բազմապիսի միություններ, աւելացած դեռ օտար մարմիններ, որոնք բոլորն էլ նոյն նպատակի կը ծառայեն»<sup>29</sup> և կոչ էր անում միավորվել և համախմբել դրանց աշխատանքը:

«Վան-Տոսպում» «Հայկական հարցին շուրջ» հետաքրքիր վերլուծականով ՀՄԴԿ-ի հնաբնակ Վարդան Պապիկյանը հետադարձ հայացք գցելով Հայկական հարցի անցած ուղու վրա՝ փորձում էր վերախմբավորել այն: Արտահայտելով ռամկավարների տեսակետներն այդ հարցում, հողվածագիրը միանշանակ չէր դիտում եվրոպական դիվանագիտության դերը Հայկական խնդրում. բացարձակորեն չէր արդարացնում և դատապարտում նրա միջամտությունը այդ հարցում, այլ փորձում էր ամեն ինչ տեսնել իր տեղի ու ժամանակի համատեքստում: «Կարելի է քննադատել օտար դիվանագիտությանը դիմելու հայերի քայլը», հարցնում էր Պապիկյանը, և ինքն էլ պատասխանում, որ այդ օրերին կարելի էր, բայց այն ժամանակ (մինչև եղեռնը-Մ.Ս.) չէր կարող հայ ժողովուրդը ունենալ ավելի քաղաքական իմաստություն և գուշակել հեռավոր ապագան. «չէ՛ որ ժողովուրդներն էլ ունեին իրենց անփորձության շրջանները, որոնց մեջ նրանց գործած արարքները կարելի չէ չափել յետագայ տարիների չափով»<sup>30</sup>, - գրում էր հեղինակը: Հողվածագիրը ցույց էր տալիս նաև, որ հետագա տարիներին հայերն արդեն համոզվեցին, որ Եվրոպան չէր փրկելու իրենց, բայց ընդգծում էր նաև, որ «նրա (Եվրոպայի-Մ. Ս.) սարսափն էր միայն, որ արգելում էր թուրքին մահացու վերջին հարվածը հասցնելու հայ ժողովրդի գլխին»<sup>31</sup>:

Պապիկյանը չէր մեղադրում Պողոս Նուբարին եվրոպական երկրներին բարենորոգումների համար դիմելու համար, գտնելով,

որ «այն չէր կարող վնասակար հետևանք ունենալ և կարող էր նոյնիսկ որոշ օգուտ բերել, եթե չլիներ պատերազմը»: Սակայն հեղինակի այն հոռետեսական հարցին, թե «որ հանճարեղը կարող էր գուշակել, թե իտալական ու բալկանեան պատերազմներից յետոյ հաջորդ տարին պիտի բռնկեր ցնորք դարձած ընդհանուր պատերազմը և Թուրքիան իր ձեռքերը պիտի գտներ բոլորովին ազատ» (տե՛ս նույն տեղում), կարելի է վստահաբար պատասխանել, որ հենց Օսմանյան սահմանադրության շրջանում, հատկապես Ադանայի կոտորածից հետո արևմտահայ հասարակության մեջ արմատավորվում էր այն մտայնությունը, որ հետագա աղետներից փրկվելու համար նախ անհրաժեշտ էր զարկ տալ ինքնապաշտպանությանը և ապավինել սեփական ուժերին: Հենց ռամկավարների շրջանում (հատկապես վասպուրականցի-Մ.Ս.) միայն զգալի թվով գործիչներ արդեն հանգել էին այդ մտքին և ձեռնամուխ եղել ինքնապաշտպանության գործին: Շարունակելով թեման, հեղինակը ցավով էր նշում, որ դիվանագիտական գործունեությամբ տարվելով և «կառավարություններին ռոմանտիկ առաքելություններ վերագրելով», մենք մոռացանք «ուժերի իրական հարաբերությունը» և փոխանակ ողջամիտ հաշվարկին ապավինելու և վտանգավոր արկածախնդրությունների մեջ չմտնելու, սուրբ տվեցինք զգացումներին, կազմակերպեցինք կամավորական խմբեր և փորձեցինք ապստամբություն բարձրացնել:

Ամփոփելով՝ Պապիկյանը եզրակացնում էր. ա) Արևմտյան Հայաստանում ապսամբական շարժումներ հայերի կողմից ամեննին գոյություն չեն ունեցել. դա թուրքական կողմի, նրա դիվանագիտության ստեղծածն էր, հայերը ջանացել են դիմել միայն ինքնապաշտպանության թուրքական հալածանքների ու հարստահարումների դեմ, բ) իսկ ինչ վերաբերում էր կամավորական շարժմանն ու հայկական կոտորածներին, ապա հեղինակն իրավացիորեն գտնում էր, որ «մեր պարտքն էր խուսափել թշնամուն որևէ առիթ ներկայանալուց և գործել ծայրայեղ աչալրջութեամբ, բայց այդպես չստացվեց: Աղմուկով, ցոյցով, սահմանից այն կողմի վիճակը հաշուի չառնելով, լայն խորհրդակցութեան չենթարկած գործ ձեռնարկուեց և հանգեցրեց կատարուած

<sup>28</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 7 փետրվարի, 1916:

<sup>29</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 21 փետրվարի, 1916:

<sup>30</sup> Տե՛ս «Վան-Տոսպ», 24 հունվարի, 1916:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում:

իրողութեանը»<sup>32</sup>: Միննույն ժամանակ հեղինակը շեշտում էր, որ կոտորածները տեղի էին ունենալու նաև անկախ վերահիշյալ հանգամանքներից, պարզապես «մեր ապրտքն էր առաւել զգօս լինել, որը չեղաւ»: Այստեղ պետք է նկատել, որ ռամկավարներն իրենց քննադատության մեջ մոռանում էին, որ հայության ճակատագիրը ոչ թե հայերն ու նրանց կուսակցություններն էին տնօրինում, այլ մեծ տերություններն իրենց քաղաքական շահախնդրություններով: Տերություններ, որոնց խղճին է ընկնում մեր ժողովրդին հասած մեծագույն դժբախտությունը:

Վերջում Պապիկյանը, որպես հետագա գործունեության ձև, առաջարկում էր արևմտահայերին ու արևելահայերին գործել տարբեր ուղղություններով, այսինքն, «Երկրի» գործերի մեջ առաջնությունը թողնվի արևմտահայերին, իսկ Կովկասում՝ արևելահայերին, «տեղացին աւելի լավ կիմանար տեղանքը»: Եվ սա ամբողջ ՀՍՌ կուսակցության տեսակետն էր այդ շրջանում:

Նշենք, որ նկատի ունենալով հայ ազգային շարժման հանդեպ Ռուսական կայսրության թշնամական քաղաքականությունը՝ «Վան-Տոսպը» ազատագրական հույսեր չի կապել Արևմտյան Հայաստանի ռուսական գրավման հետ: Թերթը չի հավատացել երիտթուրքերի՝ բարենորոգումներ իրագործելու խոստումներին, մերկացրել է նրանց ներքին և արտաքին քաղաքականությունը, դատապարտել հայկական կոտորածների գաղափարական նախապատրաստությունը և հայկական հարցի լուծումը տեսել հայերի պայքարի մեջ: Իսկ Թիֆլիսյան շրջանում «Վան-Տոսպը» հանդես է եկել իբրև արևմտյան Հայաստանից փախստականների իղձերի արտահայտիչ, մեծ տեղ հատկացրել դեռևս Վանում մնացած հայերի թշվառ վիճակի, արևելյան Հայաստանում հաստատված վանեցիների կյանքի լուսաբանմանը, փորձել է կազմակերպված բնույթ հաղորդել գաղթականներին օգնություն ցույց տալու գործին, բացահայտել Վանի շրջանում ռուսական հրամանատարության հակահայկական տրամադրվածությունը:

Թերթը ողջունեց «մեծ և անարյուն ու բոլոր ժողովուրդներին ազատություն» բերած<sup>33</sup> 1917

թվականի փետրվարյան հեղափոխությունը և աջակցություն հայտնեց «միակ օրինավոր իշխանություն» ժամանակավոր կառավարությանը: Քննադատեց «Թուրքահայաստանի մասին» խորհրդային դեկրետը՝ գտնելով, որ կործանման եզրին կանգնած և իր հայրենիքից արտաքսվող ու կոտորվող հայ ժողովրդի համար ավելորդ է դառնում ազգային ինքնորոշման իրավունքը: Հայկական հարցի վերջնական լուծումն առնչել է Անտանտի քաղաքականության, հայ դատը բոլշևիկյան կառավարությանը հանգամանորեն ներկայացնելու և վերջինիս կողմից ըմբռնողություն գտնելու հետ:

Բացի «Ներքին տեսություն», «Արտաքին տեսություն», «Շաբաթական լուրեր», «Մամուլ», «Այլևայլք» մշտական բաժիններից, թերթն ունեցել է նաև գրական, գիտական և հասարակական երկամսյա հավելված (1919 թվականին):

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Առաջին հանրապետությունը: 1918 թ. հունիսի 17-ին Ազգային խորհուրդն ու ՀՀ կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվեցին Հայաստան, որի հետևանքով հայ քաղաքական կյանքի կենտրոնը դարձավ Երևանը: Աստիճանաբար նորաստեղծ հանրապետության մայրաքաղաք տեղափոխվեցին ոչ միայն բարձրագույն իշխանության ու գործադիր մարմինները, այլև հայ կուսակցություններն ու նրանց պաշտոնական հրատարակությունները: 1919 թ. Երևան տեղափոխվեց նաև ՀՍՌ կուսակցությունն ու նրա պաշտոնաթերթ «Վան-Տոսպը», որն անվանափոխվեց և 1919 թ. սեպտեմբերի 24-ից սկսեց լույս տեսնել «**Հայաստանի ձայն**» անվամբ: Խմբագիրն էր Արտակ Դարբինյանը, թղթակցում էին արևմտահայ նշանավոր շատ գործիչներ: Թերթի գերակա խնդիրներն էին Արևմտահայաստանը և արևմտահայ գաղթականության հիմնահարցերը, առաքելությունը՝ ներկայացնել Եղեռնի ժամանակ երիտթուրքերի գործած գազանությունները, պաշտպանել Հայաստանը Թուրքիայից անջատելու գաղափարը, վեր հանել իշխող կուսակցության գործած սխալները արևմտահայերի խնդրում և հոգալ նրանց բեկորների գոյության մասին: Թերթի իդեալն էր հայրենիքի երկու հատվածները տեսնել «ազատ և ամբողջացած», որտեղ կհաստատվի «ռամկավար ժողովրդապետա-

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>33</sup> ՀԱԱ, ֆ. 4033, ց. 310, թ. 6:

կան իրավակարգ»: Հայկական հարցում թերթը անվերապահորեն պաշտպանում էր Պողոս Նուբար փաշայի մոտեցումները և ուներ արևմտյան քաղաքական կողմնորոշում: Աշխատակցել են արևմտահայ ճանաչված գործիչ-

ներ Մ. Մալոյանը, Ն. Հակոբյանը, Ա. Մաքսապետյանը, Ռ. Շատվորյանը և ուրիշներ:

Ավելացնենք, որ «Հայաստանի ձայնը» շարունակեց լույս տեսնել մինչև Հայաստանի Առաջին հանրապետության անկումը: